ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա - Կենսաբանություն
Վերապատրաստող կազմակերպություն
Պատասխանատու՝ « Երևանի Լեոյի անվան №65 ավագ դպրոց » ՊՈԱԿ

Հետազոտության թեման՝ «Էքսկուրսիաները որպես կենսաբանության դասերի կազմակերպման ձև»

ՈՒսուցիչ՝ Սեդա Սարգսյան

ՀՀ Շիրակի մարզի « Գյումրիու թիվ 15 հիմնական դպրոց »ՊՈԱԿ

Դասընթացավար՝ Պետրոսյան Կարինե

ԳՅՈՒՄՐԻ - 2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 2

Ուսուցչի նախապատրաստումը էքսկուրսիային ---------- 5

Էքսկորսիայի ընթացքը ---------- 8

Եզրակացություն ---------- 12

Առաջադրանքներ խմբային աշխատանքների համար ---------- 13

Հաշվետվության ձևը ---------- 14

Օգտագործված գրականության ցանկ ---------- 16

Ներածություն

Երեխաները պետք է վաղ տարիքից և երկար ժամանակ լինեն բնության գրկում, տոգորվեն նրանից ստացած տպավորություններով, ապրեն այն մտքերն ու զգացումները, որ նա արթնացնում է յուրաքանչյուր կենդանի էակի մեջ…

Կապտերև

Մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից են բնության ճանաչողության, բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը: Երկիր մոլորակը մարդկության բնօրրանն է, որն այսօր խնամքի և պահպանության կարիք ունի: Ներկա ժամանակում գնալով խորանում են ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրները: Իսկ այդ հիմնախնդիրների լուծման գործում մեծ է նաև դպրոցի և հետկապես կենսաբանության դերը:

Նպատակ՝ կենսաբանության դասավանդման ընթացքում երեխայի մեջ դաստիարակել կարողություն ճանաչելու բնությունը, հասկանալ բնությունը այնպես, ինչպես այն տեսնում է իրականում՝ պարզ և միաժամանակ բարդ: Դրա համար պետք է սովորողիմեջ զարգացնել դիտելու, վերլուծելու և ընդհանրացնելու կարողություններ ու հմտություններ: Իսկ դրան կարելի է հասնել կենսաբանության (նաև բնագիտության և այլ առարկաների) դասերին կազմակերպվող էքսկուրսիաների միջոցով:

Այժմ գործնականորեն չկա երևի այնպիսի դպրոց, որը չանցկացնի էքսկուրսիաներ: Դա հասկանալի է, քանի որ էքսկուրսիաները օգտակար են երեխաների ընդհար զարգացման համար: Դրանք ունեն ճանաչողական նշանակություն: Էքսկուրսիայի ընթացքում աշակերտները խորությամբ են ճանաչում հայրենի բնությունը, նրա գեղեցկությունը, բնական հարստությունները: Էքսկուրսիաներն օգնում են գիտելիքների ամրապնդմանը, զարգացնում են աշակերտների հետաքրքրասիրությունն ու ակտիվությունը, ինքնագործունեությունն ու նախաձեռնությունը, դաստիարակում սեր դեպի բնությունը, աշակերտների (կամ նրանց խմբերի) համագործակցելուն մյուսների հետ, որի աղբյուրը բնությունն է, իրական կյանքը: Դաստիարակչական առումով դա արտադասարանական

աշխատանքի ամենահամալիր տեսակ է, ուր երեխաների հետազոտական աշխատանքը զուգակցվում է ֆիզիկական կոփվածության և հարազատ շրջապատի հետ ծանոթանալու հնարավորությունների, նաև բնապահպանական մտածելակերպի զարգացման, աշխարհայացքի ձևավորման հետ:

Հետերկրաշարժյան տարիներին փոքրացել էին էքսկուրսիաների կազմակերպման հնարավորությունները, առավել սուղ և դժվարահարույց դարձել դրանք նախաձեռնելու պայմանները Գյումրիում, բայց խիստ մեծացել դրանց անհրաժեշտությունը: Սակայն իմ մանկավարժական փորձը, առարկայի ուսուցման նկատմամբ շահագրգիռ մոտեցումը, երեղայի ապագայի նկատմամբ մտահոգությունը դառնում են կռվաններ եղած խոչընդոտները հաղթահարելու համար: Ստորև ներկայացնում եմ ուսումնասիրություն, որտեղ պարզաբանվում են բնագիտական էքսկուրսիաների նպատակը, դաստիարակիչ դերը, նախապատրաստման և անցկացման ընթացքը:

Մանկավարժական գրականության մեջ բավականին մանրամասնորեն Նկարագրված է կենսաբանական էքսկուրսիաների մեթոդիկան՝ ընդգրկելով երեք հիմնական փուլեր. ուսուցչի և աշակերտի նախապատրաստվելը, էքսկուրսիայի անցկացումը, արդյունքների ամփոփումը [8]: Թվում է, թե արդյունավտության բարձրացման բոլոր միջոցները սպառված են և մնում է հմտորեն օգտագործել առաջարկված մշակումները: Բայց իմ բազմամյա փորձը ցույց տվեց ուսումնական գործընթացի այդ արժեքավոր ձևի հետագա կատարելագործման հնարավորությունները:

Դասժամերի համակարգում <<Բույսերի թագավորության ընդհանուր բնութագիրը>> թեմայից 7-րդ դասարանում նախատեսել և անցկացրել եմ աշնանային էքսկուրսիա (1 ժամ) բնության գրկում ծաղկավոր բույսերի բազմազանությունը և կենսամիջավայրի պայմաններին նրանց հարմարողականությունն ուսումնասիրելու, բույսերի կյանքում աշնանային երևույթների հետ ծանոթանալու, բնության մեջ պարզագույն էկոլոգիական կապերը պարզաբանելու, նաև պտուղների և սերմերի տարածման ձևերը ուսումնասիրելու նպատակով: Այդ նպատակով անրաժեշտ է ամրապնդել դպրոցականների ուսումնասիրած ընտանիքներին պատկանող հիմնական տեսակները ճանաչելու կարողությունները,

երխաներին ծանոթացնել ոչ միայն բույսերի տեսակներին, այլև դրանց զարմանահրաշ հատկություններին:

Երեխաների ունեցած գիտելիքների և կատարած ուսումնասիրություններից ելնելով նպատակահարմար է նրանց մղել ինքնուրույն եզրակացության՝ ժամանակին լրացնելով երեխաների գիտելիքները հետաքրքիր տվյալներով ու ստույգ փաստերով: Բնաճանաչման այսպիսի ձևը ակտիվացնում է երեխաներին, զարգացնում նրանց մեջ դիտելու, համագործակցելու, ընդհանրացումներ և եզրակացություններ անելու հմտություններ: Ի դեպ, միշտ պետք է հիշել, որ էքսկուրսիան բնության գրկում զվարճություն չէ, այլ յուրատեսակ դաս, որը հնարավորություն է տալիս ձեռք բերելու բնության մասին խոր և կայուն գիտելիքներ:

Ելնելով դպրոցի բնական շրջապատից՝ կարելի է էքսկուրսիան կազմակերպել գյուղական դպրոցում՝ դպրոցի ուսումնափորձնական հողամասում, անտառում, իսկ քաղաքի պայմաններում՝՝ զբոսայգում, պուրակում: Վերոհիշյալ թեմայով էքսկուրսիան նպատակահարմար եմ գտել կազմակերպել հոկտեմբեր ամսին (տեղի պայմաններից ելնելով), քանի որ տարվա այդ ժամանակամիջոցում առանձնապես ցայտուն են արտահայտվում նաև աշնանային երևույթները, ավելի լավ նկատվում տերևաթափը բնափայտային և թփային ձևերի մոտ:

Խնդիրները՝ ծանոթացնել սովորողներին ծաղկավոր բույսերի բազմազանության հետ, ցույց տալ նրանց կառուցվածքային առանձնահատկությունները և նրանց հարմարվածությունը պայմաններին, նախապատրաստումը ձմեռելուն, ընդհանրացրել սովորողների գիտելիքները բույսերի հիմնական ձևերի մասին , ցույց տալ բույսերի փոխադարձ կապը շրջապատող միջավայրի հետ: Հատուկ ուշադրություն դարձնել սովորողների մոտ զարգացնելու կենդանի օբյեկտների հետ աշխատելու գործնական կարողություններ և հմտություններ (կատարել ուսումնասիրություններ, համեմատել օբյեկտներն ուերևույթները, կատարել ընդհանրացումներ և եզրակացություններ, ձևավորել հերբարիումներ, կազմել հաշվետվություններ): Էքսկուրսիայի ընթացքում իրականացել սովորողների էկոլոգիական դաստիարակություն, սերմանելով սեր և պատասխանատվություն դեպի բնությունը, ընդգրկելով նրանց բնության օբյեկտների պահպանության անմիջական գործունեությանը, ինչպես նաև առաջադրանքը ինքնուրույն, իրարից

անկախ, զույգերով կամ խմբերով կատարելու, միմյանց օգնելու, միմյանց հետ համագործակցելու գործընթացի ճիշտ կազմակերպումը:
Էքսկորսիայի նախապատրաստման ժամանակ նպատակահարմար եմ գտնում մասնակից դարձնել գեղագիտական կենտրոնի աշխատակցի (դպրոցում գեղագիտության մասնագետի բացակայության դեպքում): Օգտագործելով ցուցադրման համար նկարիչների նկարներ՝ աշնանային գեղեցիկ բնապատկերներով, նա անցկացրել է մասնագիտական թեմատիկ պարապմունք, սովորողների մոտ զարգացնելով գեղեցիկի զգացում՝ գիտակցելով բնության գեղեցկությունը, նրա անկրկնելիությունը և եզակի լինելը: Դրա հիման վրա սովորեցնել աշակերտներին նկարելու ծառերի, թփերի ստվերանկարները (սիլուետները), որոնք անհրաժեշտ են ուսումնասիրել էքսկուրսիայի ժամանակ, նկարներում վերարտադրել աշնանային գունազարդման երփներանգները: Այդպիսի պարապմունքը կլինի ավելի արդյունավետ և ճանաչողական, եթե այն անցկացվի էքսկուրսիայի համար ընտրված վայրում, որտեղ և երեխաները կհամոզվեն, որ տարվա յուրաքանչյուր եղանակ, նրա տասներկու ամիսներից ամեն մեկը անկրկնելի հրաշք է, յուրաքանչյուրն ունի իր նուրբ հմայքը, իր ուրախությունն ու կարևորությունը:

Ուսուցչի նախապատրաստումը էքսկուրսիային

Նախ որոշել եմ էքսկուրսիայի անցկացման վայրը և նրա երթուղին: Գնացել եմ ընտրած վայրը, ընտրել տեղամասը, դիտել կենդանի օբյեկտները և որոշել կազմակերպման ձևը, նպատակը, մշակել առաջադրանքները, քարտերը: Անհրաժեշտ եմ համարել նախապատրաստել դիտման օբյեկտների ձևաբանական առանձնահատկությունների ուսուցումը, ինչպես նաև էքսկուրսիայի համար անհրաժեշտ սարքավորումները (հերբարիումային թղթապանակներ, պոլիէթիլենային պարկիկներ, սանտիմետրավոր ժապավեն, խտասկավառակ՝ Չայկովսկու, Վիվալդիի <<Տարվա եղանակները>> ձայնագրումներով, հանձնարարական քարտ-առաջադրանքներ՝ աշակերտների խմբային նանհատական ուսումնասիրությունների համար): [2,5]

Որպեսզի հասնենք այն բանին, որ դպրոցականները պատասխանատվությամբ ուպատրաստակամությամբ վերաբերվեն էքսկուրսիային, ուսումնական նյութի յուրացմանը և համապատասխան մակարդակով կատարեն իրենց տրված ինքնուրույն հանձնարարությունները, ուսուցչի մասնակցությունը նվազեցնելու, միևնույն ժամանակ պահպանելու և առավել ակտիվացնելու աշակերտների ինքնուրոյն աշխատանքի և քարտ- առաջադրանքների առավելությունը, անհրաժեշտ եմ համարել ամբաղջ դասարանի համար տալ ընդհանուր գրավոր հրահանգ:

Գրավոր հրահանգը ձևակերպվել է թղթի վրա: Մշակել և օգտագործել եմ շշտական գրավոր հրահանգի մշտական ձև: Գրավոր հրահանգում նշել եմ թեման, ուսումնական խնդիրները, էքսկուրսիայի անցկացման տեղը և ժամանակը: Ներքևում տրվել է աշակերտի ինքնուրույն աշխատանքի համար հանձնարարությունների ցուցակ, յուրաքանչյուր հանձնարարության կատարման համար անհրաժեշտ սարքավորումներ և հաշվետվության ձևը: <<Սարքավորումներ>> այունակում նշվում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ունենալ հանձնարարությունները կատարելու համար: Դա կարող է լինել ծոցակետր, լուսանկարչական ապարատ, տեսախցիկ՝ բնության տեսարանները նկարելու, բնության ձայները (թռչունների ծլվլոց, առվակի խոխոջյուն, տերևներ սոսափյուն…) ձայնագրելու, խտասկավառակներ՝ տարվա եղանակներին ու բնությանը նվիրված երաժշտական ստեղծագործությունները լսելու համար, տուփեր, թղթապանակներ՝ բույսեր, տերևներ, սերմեր հավաքելու և հետագայում դիդակտիկ պարագաներ պատրաստելու համար [2] : Վերջին այունակում առաջարկվում է հաշվետվության ձև, որը յորաքքանչյուր խումբ պետք է ներկայացնի մի քանի օր հետո (նկարներ, շարադրություններ, հերբարիումներ,հավաքածուներ, սահիկներ, դիդակտիկ այլ պարագաներ): Վերջում տրվում է գրականության ցանկը [1,6] և ինտերնետային կայքերի հասցեներ, որին պետք է ծանոթանան դպրոցականները: Իսկ թղթի վերին ձախ անկյունում փակցվում է էքսկուրսիայի թեմային համապատասխան որևէ բնանկար: Հրահանգը փակցվում է էքսկուրսիայից մի քանի օր առաջ, իսկ աշակերտներին առաջարկվում է առաջին օրից ինքնուրույն կազմել խմբեր(3-5 աշակերտ), հետո միասին ընտրեն հանձնարարությունները ինքնուրույն աշխատանքի համար: Այդ պահից սկսվում է աշակերտների պատասխանատվության և ակտիվության մեղանիզմի ձևավորումը:

Նրնք հաճախակի մոտենում են փակցված հրահանգն, վիճու և քննարկում են հանձնարարությունները: Սկսվում է յորաքանչյուր աշակերտի հոգեբանական նախապատրաստումը լուրջ աշխատանքի:

Աշակերտների խմբերը կազմվում է ըստ իրենց ընդունակությունների կամ նախասիրությունների: Տարբեր ընդունակություններով ու նախասիրություններով աշակերտներին հանձնարարված աշխատանքները տարբերվել են իրենց բարդությամբ: Նման մոտեցումը նպաստում է թույլ կամ սահմանափակ կարողություններ ունեցող աշխկերտների ինտեգրմանը էքսկուրսիայի ակտիվ գործընթացին:

Էքսկուրսիայի նախօրյակին կազմակերպված հանդիպման ժամանակ ծանոթացել եմ աշակերտների տրամադրվածությանը, նրանց կատարած նախապատրաստական աշխատանքներին, միաժամանակ տվել որոշ անհրաժեշտ ցուցումներ, տեղեկություններ էքսկուրսիայի վայրի և այդ տարածքի պահպանման խնդիրների մասին, պատասխանել երեխաներին հուզող հարցերին:

Սովորաբար բոլոր դասարանների աշակերտները էքսկուրսիան ընդունում են որպես պարապմունքի ցանկալի և հետաքրքիր ձև, դրա համար ամեն տեսակի հրահանգից հետո շատ հարցեր են տալիս: Բայց այս դեպքում հարցերը լինում են ոչ թե կազմակերպչական բնույթի, այլ, որպես կանոն, ուղղված են բացահայտելու կոնկրետ հանձնարարությունների մանրամասնությունների կատարմանը, քանի որ յուրաքանչյուր դպրոցական պետք է հստակ գիտենա, թե ի՞նչ է ինքն անելուէքսկուրսիայի ժամանակ և կատարի հանձնարարությունը՝ նույնիսկ առանց ուսուցչի հիշեցման: Աշակերտների մոտ բարձր հուզական տրամադրություն ստեղծելու նպատակով զրույց տարվում է Վիվալդիի <<Տարվա եղանակները (աշուն)>>, երաժշտական ստեղծագործության հնչյունների ներքո: <<Աշունը գեղանկարչության, պոեզիայի և երաժշտության մեջ>> թեմայով հարցազրույցի ժամանակ հիշատակվել են հանրահայտ գեղանկարիչներ և նրանց նկարները (Մ. Սարյան՝ <<Ոսկե աշուն>>, Միեր Աբեղյան՝ <<Աշունը Երևանում>>, Շուկշին՝ <<Ոսկե աշուն>>, <<Աշնանային տերևներ>>, <<Կեչու պուրակը>>, Գ. Բաշինջաղյանի, Հ. Կոջոյանի, Գ. Գյուրջինյանի որոշ բնանկարներ և այլն), նաև մեջբերումներ արվել աշնան վերաբերյալ Վ. Տերյանի, Մ. Մեծարենցի, Ավ. Իսահակյանի, Ղ. Աղայանի, Ա. Ս.

Պուշկինի գրած բանաստեղծություններից: Նպատակահարմար եմ գտել ցուցադրել նաև տարիների աշակերտների կատարած ստեղծագործական աշխատանքները՝ հաշվետվություններ, ցուցապաստառներ լուսանկարներով, խտասկավառակներում եղած նյութեր, հերբարիումներ, շարադրություններ բնության աշնանային երևույթների նկարագրումով՝ <<Ոսկե աշնան հեքիաթը>>, <<Գեղեցիկը մեր կողքին է>>, <<Աշնան մեղեդի>>, <<Տերևաթափի նախերգանքը>>:

Էքսկորսիայի ընթացքը

Էքսկուրսիան անցկացվել է բարենպաստ, արևոտ օր: Երթուղու ընթացքում պատմել եմ բնության և նրա հարստությունների, մարդկանց կյանքում դրանց նշանակության մասին՝ ընդգծելով բնության նկատմամբ խնամքով վերաբերմունքի անհրաժեշտությունը: Ժամանելով նախատեսված վայր սկսել ենքդիտումներն ու ուսումնասիրությունները, սովորողների ուշադրությունն եմ հրավիրել հանդիպած բուսականությանը, իմ օգնությամբ, օգտվելով որոշիչ ատլասից, անվանել ենք մեզ ծանոթ և անծանոթ բույսերը, ինչպես նաև ուսումնասիրել ենք <<ոսկե աշնան>> բնորոշ հատկանիշները [4];

Քանի որ էքսկուրսիան կազմակերպվել էր անտառում, այն սկսեցինք <<անտառապահի>> հետհանդիպումով: Նախօրոք սովորողներից մեկին նախապատրաստել էի որպես անտառապահ, որը անտառի մոտակայքում <<հանդիպեց>> խմբին,զրուցեց նրանց հետ, պարզեց էքսկուրսիայի նպատակը, միևնույն ժամանակ նա բացատրեց աշակերտներին ոչ միայն այն, թե ինչ չի կարելի անել անտառում, այլև այն, թե ինչ է անհրաժեշտ անել, որպեսզի չփչանան անտառի հարստությունները: Զրույցի ընթացքում նա աշակերտներին ուղեկցեց անտառահատման տեղը, որտեղ տարբեր բույսեր են աճել, և միասին պարզեցինք, թե ինչպես է փոխվել բուսական կազմը: Որից հետո <<անտառապահին >> առաջարկվեց էքսկուրսիայի ընթացքում ուղեկցել խմբին:

Իսկ եթե էքսկուրսիան կազմակերպվում է այլ վայրում (պուրակ, զբոսայգի), ապա այն նպատակահարմար է սկսել ներածական զրույցով, որի ընթացքում քննարկվում էբույսերի բնական և արհեստական համակեցությունների նմանություններն ու տարբերությունները: Անհրաժեշտ է,որ դպրոցականները, թվարկելով

արհեստական համակեցության առանձնահատկությունները, նշեն,որ զբոսայգին, ուսումնափորձնական հողամասը բույսերի կուլտուրական տնկարկներ են և բերեն բնական համակեցությունների օրինակներ: Պետք է ձգտել նրան, որ աշակերտները բնության և բնական երևույթների մասին նոր գիտելիքներ ձեռք բերեն, ինչպես նաև հասկանան մարդու դերը բնության օգտագործման և վերարտադրման գործում: Անհրաժեշտ է բուսական համակեցությունը ցույց տալ ոչ թե մեկուսացված, այլ այնպես, որաշակերտներն ընկալեն բնությունը որպես մեկ ամբողջականություն՝ ըմբռնելով բուսական ու կենդանական օրգանիզմների փոխադարձ կապն ու անքակտելիությունը:

Կանգ առնելով աշնանային վերափոխումներով ավելի բնորոշ բնության մի անկյունում, աշակերտների հետ միասին թվարկեցինք աշնան բնորոշ հատկանիշները՝ անկայուն եղանակ, կարճ լուսավոր օր, օդի ջերմաստիճանի նվազում, խոնավության ու տեղումների ավելացում: Սովորողները թվարկում են և ուրիշ հատկանիշներ՝ առավոտյան մառախուղի երևալը, շատ թռչունների համախմբված չուն, բույսեր պտուղների հասունացումը: Սակայն աշնան ամենաշքեղ հատկանիշը ծառերի վրա սաղարթի խայտաբղետ գունավորումն է, որը գրավեց բոլորի ուշադրությունը: Այնուհետև զրույցի ժամանակ պարզաբանվեց բնության մեջ աշնանային երևույթների պատճառները: Հարցերը,որոնք առաջացան զրույցի ժամանակ հետևյալն էին.

- Ի՞նչ է տեղի ունենում բույսերի հետ աշնանը:
- Ինչպե՞ս էփոխվում ծառերի տերևների գունավորումը:
- Ինչու՞ ենհեշտությամբ թափվում դեղին տերևները:
- Ինչու՞ աշնանը տերևները փոխում են իրենց գույնը:
- Ի՞նչ նշանակություն ունի տերևաթափը:
- Ի՞նչ տեղի կունենա բարդու հետ, եթե նա ձմեռը մնա կանաչ տերևներով:
- Ինչու՞ ժողովուրդն ասում է. <<Բարությունից չէ, որ ծառը տերևներ է թափում>>:

Այնուհետև միասին վերհիշելով և ամրապնդելով բնագիտությունից արդեն ծանոթ <<ծառ>>, <<թուփ>>, <<խոտաբույս>>, <<միամյա և բազմամյա բույսեր>>, <<բուն>>, <<սաղարթ>> հասկացությունները [7], տվյալ տեղամասի բույսերի տեսակների

հիման վրա սովորողները կարողացան տարբերակել ծաղկավոր բույսերի հիմնական կոնսական ձևերը, գտնել նրանց մոտ առկա նմանություններն ու տարբերությունները,նշել նրանց օրգանների կառուցվածքային առանձնահատկությունները, ծանոթացան կյանքը շարունակող (բազմամյա) խոտաբույսերի տեսկներին:

Զրույցից հետո խմբերն անցան ինքնուրույն աշխատանքի՝ համաձայն իրենց հրահանգչական քարտերի: Աշխատանքը սկսելուց առաջ ես անցկացրեցի հրահանգավորում աշխատանքի կատարման կարգի մասին: Խմբերը հեռացան միմյանցից տարբեր ուղղություններով, 15-20 րոպեի ընթացքում ուսումնասիրեցին տարածքը, խնամքով գրանցեցին յուրաքանչյուր հանձնարարականի կատարման ընթացքը, նշելով բույսերի տեսակները, որպեսզի հաջորդ դասին հեշտ լինի վերարտադրել այն գիտելիքները, որոնք ստացել են էքսկուրսիայի ժամանակ: Այն ժամանակ, երբ դպրոցականները կատարում էին խմբային աշխատանք, յորաքանչյուր խմբից մի դպրոցական կատարում էր անհատական առաջադրանք առանձին բույսերի ուսումնասիրման գծով, որն ավելի բնութագրական է տվյալ համակեցության համար: Որոշ ժամանակ անց դպրոցականները վերադարձան պայմանավորված տեղը, և ամեն մի խումբ զեկուցեց կատարած աշխատանքի մասին: Ես ուղղում, լրացնում էի նրանց պատմածները, դիտում,ստուգում հավաքած նյութերը և ընդհանրացնող զրույցում պարզաբանում,թե ինչպես են յուրացրել աշակերտները նոր գիտելիքները: Զրույցի բովանդակության մեջ կարելի է ընդգրկել հետաքրքրաշարժ, ասացվածքներ, հարցեր, հանելուկներ.

Ինչու՞ են ասում. <<Եթե աշնանը տերևաթափը արագ է անցնում,պետք է սպասել դաժան ձմռան>>:

Գուշակեք.<<Այն ո՞ր ծառն է բարձր փղից, իսկ պտուղը փոքր է ձվից>>:

Շարունակելով էքսկուրսիան ուսուցիչը կարող է դպրոցականների ուշադրությունը հրավիրել տարբեր կենսամիջավայրերում ապրող, նույն տեսակին պատկանող բույսերի վրա, և կարելի է տալ նոր առաջադրանք յուրաքանչյուր խմբին՝ նույն տեսակին պատկանող բույսերի վրա միջավայրի ազդեցության բացահայտման ուղղությամբ:

Սովորողների դիտումները թույլ են տալիս սահմանել էկոլոգիական օրինաչափություններ շրջապատող միջավայրի գործոններից (լույս, ջերմություն, խոնավություն) բույսերի կենսական գործընթացների կախվածության վերաբերյալ:

Մեր էքսկուրսիայի վերջում միասին հավաքեցինք կոներ, պտուղներ, ճյուղեր և կոճղեր, կոճղերից և ընկած ծառերից պոկեցինք կեղևը: Որքան՝ շատ բան կարող են դրանից պատրաստել երեխաները: Անհրաժեշտ է,որ երեխաներն ուշադիր դիտեն բնության անկրկնելի ստեղծագործությունը, , և դա կհուշի անհրաժեշտ պատկերներ ու կոմպոզիցիաներ:

Էքսկուրսիան ավարտվեց բնության գեղեցիկ մի անկյունում, որտեղ անցկացրեցի ընդհանրացնող զրույց և հանձնարարվեց տնային առաջադրանք: Այդ ընթացքում օգտագործվեց երաժշտական նվագակցություն՝ հնչեցին երաժշտական հատվածներ հայ անվանի կոմպոզիտորների ստեղծագործություններից:

Տանը աշակերտները ձևակերպում են հաշվետվություն՝ համաձայն հրահանգչական քարտերի առաջադրանքների, կազմում հերբարիումներ, սերմերի հավաքածու, պատրաստում տարբեր իրեր ու առարկաներ, կազմում պաստառներ՝ կատարած լուսանկարներով, գրում շարադրություններ, ստեղծում ֆայլեր և անցկացնում խտասկավառակի վրա,համապատասխան նյութերով ստեղծում սահկահանդես:

Նման էքսկուրսիաները կարելի է անցկացնել դպրոցից ոչ հեռու:

Էքսկուրսիայի արդյունքների ամփոփումից հետո կարելի է կազմակերպել աշակերտների կատարած աշխատանքների ցուցահանդես: Ցուցահանդեսի հետ համատեղ կարելի է կազմակերպել ցերեկույթ <<Ոսկե աշուն>> կամ <<Անտառային ձայներ>> թեմայով: Նաև ստեղծել կայք էջշրջակա միջավայրում կատարած դիտումների արդյունքների ցուցադրման համար:

Նմանատիպ էքսկուրսիաները հնարավորություն են տալիս սովորողներին ուշադրությոն դարձնել կենսաբանության և հարակից առարկաների (ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց լեզու, գրականություն և այլն) միջև առկա փոխադարձ կապին, նպաստում նրանց գեղագիտական և էսթետիկական զարգացմանը, ինչպես նաև ձևավորում ստեղծագործական մոտեցում,երևույթները յուրովի մեկնաբանելու ունակություն:

Եզրակացություն

Այսպիսով, յուրաքանչյուր նպատակային էքսկուրսիա ունի ճանաչողական նշանակություն: Բնությունը ճանաչելու միակ առհավատչյան բնությանը մոտ լինելն է: Վերջինս հնարավոր է դառնում տարաբնույթ էքսկուրսիաների միջոցով:

Իսկապես, ամենամեծ դաստիարակը բնությունն է, պետք է ապավինել նրա ուսուցողական ուժին, բնության միջոցով և բնության շնորհիվ էլ պետք է սովորեցնել ճանաչել աշխարհն ու մարդկանց: Եվ ինչպես հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել. <<Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է: Այդ ուսուցիչն ամենահեշտ ու դյուրին ձևով, խոր ու կայուն կերպով սովորեցնում է ճանաչել բնությունը>>: [9]

Ճիշտ կերպով կազմակերպված էքսկուրսիան և համապատասղան աշխատանքային գործիքներով ու համապատասխան պայմաններում համագործակցային ճանաչողական գործընթացների ճիշտ կազմակերպումը (դասավանդման մեթոդաբանության մեջ նոր մոտեցումների որդեգրմամբ) աշակերտների աշխարհը ճանաչելու, բնությունը սիրելու և այն պահպանելու հուսալի գրավականը կլինի:

Առաջադրանքներ խմբային աշխատանքների համար

Առաջադրանք 1

Որոշեք, թե ձեզ հայտնի ընտանիքի ի՞նչ բույսեր են աճում տվյալ տեղամասում: Կազմեք դրանց ցուցակը, նշեք ո՞ր դասին, ընտանիքին, տեսակին են պատկանում այդ բույսերը:

Առաջադրանք 2

Գտեք ծաղկումը շարունակող բույսեր: Նրանց ծաղկի կառուցվածքի հիման վրա որոշեք, թե ո՞ր ընտանիքին են պատկանում այդ բույսերը:

Առաջադրանք 3

Դիտարկեք բույսեր, որոնք աճում են տվյալ տեղամասում: Որոշեք, թե ինչումն է արտահայտվում բույսերի հարմարողականությունը տվյալ տեղամասի աճման պայմաններին:

Առաջադրանք 4

Դիտեք բույսեր, որոնք աճում են խոնավ և չորային տեղամասերում: Որոշեք այդ բույսերի կառուցվածքային առանձնահատկությունները, տվյալ տեղամասի միձավայրով պայմանավորվածության հնարավորությունը:

Հաշվետվության ձևը

1. Էքսկուրսիայի անցկացման վայրը, եղանակային պայմանները:

2. Պատասխաններն ու եզրակացությունները ըստ համապատասխան հրահանգչական քարտով տրված առաջադրանքի:

3. Աղյուսակների կազմում՝ <<Բույսերի կենսաձևերի բազմազանությունը, դրանց առանձնահատկությունները>>:

Բույսերի կենսաձևերը		Բույսերի անվանումը	Պտուղը	Տերևների աշնանային գունավորումը	Տերևաթափի առանձնահատ-կությունները
1	Ծառեր				
2	Թփեր				
3	Խոտաբույսեր				

4. Բնության աշնանային անկյան գրական-գեղարվեստական նկարագիրը:

Աշնանային բանապատկեր

Էքսկուրսիա դեպի ----------

Էքսկուրսիաի թեման

Ուսումնասիրաման խնդիրները

Անցկացման վայրը

Անցկավման ժամանակը

Խմբերի կազմը

Առաջադրանքներ

Սարքավորումներ

Հաշվետվություն

Գրականություն

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Պ. Տրավկին – Հետաքրքրաշարժ փորձեր բույսերի հետ, 1968 թ. <<Լույս>> հրատարակչություն

2. Դ. Ի. Տրայտակ – Կենսաբանության կաբինետ, 1983 թ. <<Լույս>> հրատարակչություն

3. Յա. Ի. Մուլքիջանյան, Ա. Մ. Բարսեղյան – Օգտակար բույսերի հայերեն, ռուսերեն և լատիներեն բառարան, 1988 թ. <<Լույս>> հրատարակչություն

4. В. С. Новиков, М. А. Губанов – Школьный атлас определитель высших растений. 1985 г., Москва просвещение

5. Ս. Գ. Չիչակյան – Դպրոցական գործնական կենսաբանություն, 1977 թ. <<Լույս>> հրատարակչություն

6. Լ. Վ. Հարությունյան – Քո շրջապատի ծառերը: Քո շրջապատի թփերը, 1983 թ. <<Սովետական գրող>> հրատարակչություն

7. Վ. Գ. Խրժանովսկի, Ս. Ֆ. Պոնոմորենկո – Բուսաբանություն, 1986 թ. <<Լույս>> հրատարակչություն

8. Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան – Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, 2008 թ. Ք. Վանաձոր, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ

9.Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան 2014 թ.